



Թ. ՏԱՐԻ ԹԻԻ 44

— ՏՈՒՐԱՐԹ —

29 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1905

Կ. ՊՈԼՍՈՑ ՀԱՄԱՐ		ԳԱԽԱՌԱՅ ՀԱՄԱՐ		ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ	
Տարեկան	50 Ղրշ.	Տարեկան	54 Ղրշ.	Տարեկան	42 Ֆր.
Վեցամսեայ	25 ,	Վեցամսեայ	27 ,	Վեցամսեայ	6 ,

ԳԱՌՆԻԿ ՍԱՐԳԻՍՕՅ ԵՒ ԸՆԿ

ՄԵԾ ՎԱԾԱՌԱՏՈՐՆ

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԺԱՄԱՑՈՑՆԵՐՈՒ, ՇՂԹԱՑՆԵՐՈՒ ԵՒ ԳՈՀԱՐԵՂԻՆԱՅ

Կ. Պոլիս, ձեռնարկի խանիկան, Թիւ 16

Մասնաւորապէս կը խնդրուի ուղադրութիւն ընել ՍԱՐԳԻՍՕՅ անունը կեղծող կարգ մը նմանակ ժամացոյցներուն որոնք հրապարակի վրայ կը շրջին:

ՍԱՐԳԻՍՕՅ ժամացոյցները ջերմապէս կը յանձնարարուին ինչպէս նաեւ ջենիթը՝ քի՛ Կ. Պոլիս, եւ քի՛ Գաւառները, ուրկէ եղած յանձնարարութիւնք անմիջապէս կը կատարուին գինացուցիչ պայմաններով:

Ծանօթ. — Ջենիթ ժամացոյցները Բարիզի 1900 Արուեստահանդէսին մէջ ամենեւնի բարձր պարգեւին արժանացած են:


Հատոր 40 փարսա

ԱՐՏՈՂԱՏԻՐ — ԱՐՄԷՆ ԼՈՒԻՍԻՆՅԱՆ

(آ. آسادوریان) شرکت مرتبه مطبعی — باب عالی جاده سنده و صر و ۵۲

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Թ. ԱՍԱՏՈՒՐԵԱՆ

Կ. Պոլիս, Պապը-Ալի ճառարի քիւ 52



Ձեռքի, ոտքի ու ոտքի եւ ձեռքի
միանգամայն մեքենաներ
կը գտնուին

Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ,
քայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ
մեքենայ մը անթիւ և անհամար ծառայութիւններ կը մատու-
ցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց
եւ սաղտուկի աղբիւր մըն է:

Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

Ս Ի Ն Կ Է Ռ

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԿԱՅՍ. ՊԱԼԱՏԱՆ

THE SINGER

MANUFACTURING COMPANY



մեքենան լաւագոյն է. սոյն մեքենան ամենէն կատարելագործուածը,
հաստատունը եւ դիւրագործելին ըլլալուն բովանդակ աշխարհի

մէջ՝ ամէն մարդ Սինկերի մեքենան կը գնէ:

Սինկերի մեքենաները կը ծախսին մի միայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց մէջ:

ՀԱՐԱՐԱՆԱԿԱՆ
ՍՏԱՆԱԿԱՆ

ԲԱՐԱՆ

(1. Մեծ փողոց, Պօս Մարշէի դէմ, թիւ 343 եւ 343 կրկին .

(2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիւէին դէմ.

ԿԱԼԱԹԱ

(1. Սինկեր խան, Թիւնէլի ետեւը.

(2. Գարաքէօյ, Թրամվէյի կայարանին դէմ.

ՊՈԼԻՍ

(1. Սուլթան համալ.

(2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ, թիւ 13 .

ՍԵՆՏԵՐ

2արշը Պօյու, թիւ 120 .

Կատարեալ երաշխաւորութիւն

Մասնաձիւղեր գաւառներու բոլոր ֆաղափներու մէջ:

Սինկերի Ընկերութեան Կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, թիւ 343 եւ
343 կրկին, Տիւզզուլուի տունը:

Ֆ Է Ն Ի Ք Ս Օ Թ Ր Ի Շ Ի Է Ն

ԿԱՅՍ. ԹԱԳ. ԱՌԱՆՁՆԱՇՆՈՐՀԵԱԼ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԻՄՆՈՒԱԾ 1860 ԻՆ Ի ՎԻԷՆԱ



ԿԵԱՆՔԻ ՃԻՒՂ

Դրամագլուխ եւ Պահեստի գումար

31,008,000 ՖՐԱՆԿ

ՀՐԴԵՂԻ ՃԻՒՂ

Դրամագլուխ եւ Պահեստի գումար

17,000,000 ՖՐԱՆԿ



ՖԷՆԻՔՍ Լաւագոյն պայմաններով կ'ապահովագրէ ամէն տեսակ շէնք, ապրանք և
կարասիք:

ՖԷՆԻՔՍ Լաւագոյն պայմաններով կը կնքէ ամէն տեսակ ապահովագրութիւնը
մարդկային կեանքի վրայ:

ՖԷՆԻՔՍ Լաւագոյն պայմաններով կ'ապահովագրէ, ամէն տեսակ ապրանք՝ շոգե-
նաւի՝ և առագաստանաւի վրայ:

Ընկերութեան գրամատունն է ՔՐԷՏԻ ԼԻՕՆԷ, Ընդհանուր գործակալութեան
գրասենեակն է Պոլիս, Ալեանաք խան, թիւ 11—16:

Ընկերութիւնս կ'ընդունի ի գաւառս պատուաւոր ներկայացուցիչներ:

Լիազօր Ընդհանրացուցիչ

Գ. ՖԷՐԱՏԵԱՆ



ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԾԱԲԱԹԱԹԵՐԹ

ՏՆՕՐԷՆ - ԽՄԲԱԳԻՐ ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ

Թ. ՏԱՐԻ ԹԻԻ 44

ԾԱԲԱԹ

29 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1905

ԲՈՎԱՆԴԱՅՈՒԹԻՒՆ

Դիտութեան ծառը. — ԲԵՐՈՒՉ ԶՍՏԻԿԵԱՆ: Ուղեւորութիւն շուրջ քաւորներու, դերասաններու եւ դերասանուհիներու՝ որք ի Բերա. — ԵՐՈՒԱՆԴ ԹՕԼՍԵԱՆ: Արուեստասերի մը յուշերը. — ԱՇՈՏ ՄԱՏԱԹԵԱՆՑ: Մրակցական նամակակնի. — ՄԱԴՐՈՒՀԻ: Ըղձակ (քանասեղծութիւն). — ՍՈԿՐԱՏ ՍԱՐԱՅԵԱՆ: Սաղօնի հակիքներ. — ՎԱՀՆ ՓԱՓԱԶԱՆ: Եսթրոնան յուրեր:

ԳԻՏՈՒԹԵԱՆ ԾԱՌԸ

ԸՆՏԱՆԵԿԱՆ ՀԱՐՑԵՐ

Այս օրերս անդլիական թերթ մը ձեռքս անցաւ, որուն մէջ նշանաւոր հեղինակներու կարծիքը կը խնդրուի սա՛ հարցին համար թէ՛ արդեօք պէ՞տք է մանուկներուն եւ մանաւորապէս աղջիկներուն բացատրել թէ ի՞նչ է ամուսնական վիճակը, կամ տարբեր խօսքով՝ ի՞նչ է Գիտութեան Ծառը:

Կին ու այր գրողներ վարժապետական քօնով կը յայտարարեն իրենց կարծիքը այս մասին, եւ գրեթէ միահամուռ կը փափաքին որ՝ աղջիկ մը աստիճանաբար, յատուկ ուսուցիչներու միջոցաւ, սովորի իր մարմնոյն բնախօսական վիճակները, ամուսնական պահանջումները, սովորի ընտրել ապագայ ամուսինը:

Այդ իմաստասէրները կը պնդեն ու կը պահանջեն որ աղջիկ մը հարկ է, պարտաւոր է սեռական եւ ծննդական յարաբերութեան վրայ լիովին տեղեկութիւններ ունենայ, վասն զի, վիպական, իտէական միտումներ, մանաւանդ անգիտութիւնը՝ անդարմանելի վտանգներու կրնան տանիլ անփորձ, տգէտ արարած մը:

Արդարեւ, իրապաշտ եւրոպան հետամուտ է երկար ժամանակէ մը ի վեր՝

քանդել, պղտորել մարդկային կենցաղին դառնութիւններուն սփոփանք տուող ամէն խորհուրդ, իտէս, երազ. այդ հէգ կեանքին ամենէն վատ ու յոռի կողմերը պարզելու հակամէտ է, և ինչ որ նուիրական է ու յարգելի՝ գրչի ծայրով կը պղծեն, սակայն չէինք յուսար որ ընտանեկան սրբաշնուն թեան եռանդուն պաշտպան կանգնող մաքրակրօն ազգի մը զաւակները հետազննեն ու բացայայտեն հարց մը՝ որ կուսական ամօթխածութեան քողը կը պատռէ: Այդ հրապարակային յայտնութիւնը առաքաստի խորհուրդին վրայ, ընդհանուր աղջկներ կարգացած՝ և անտարակոյս ժպտած են ըսելով:

— Անամօթ են մարդիկ, ի՞նչ հարկ թմբուկով կրկնել բան մը՝ զոր մենք գաղտնապէս շատ աւելին գիտենք:

Եւ իրաւունք ալ ունին:

Գիտական աշխարհին մէջ կան բաներ որք կը խօսուին, բայց չեն հրատարակուիր, կան ալ բաներ որ մասնաւոր հատորներու մէջ կ'ուսումնասիրուին՝ խելահաս անձերու գիտութեան համար, բայց օրաթերթերու մէջ՝ որոնք ամէն հասակէ մարդերու ձեռքը կ'անցնին, ասոնց մէջ գրել՝ իրաւ ամօթալի է: Բնախօսական երեւոյթներու չափ՝ որ մարդուն կամքէն անկախօրէն կը գործեն, կը գտնուին նաեւ կարգ մը այլափոխական ու զգայնական տարբեր երեւոյթներ՝ որոնք արբնութեան մէջ երեւան կ'ելլեն, մարմնի, մտքի և սրտի մէջ նորանշան յեղաշրջումներ կը յառաջ բերեն, և նորագոյն ու զգալի փոփոխումներ կը պարզեն: Ասկէ զատ բնութիւնը և վիպական նկարագիրներ յարաժամ կը խօսին արբունքի հասած աղջկան բանականութեան, երեւակաշուրթեան և զգայարանքին, և այս տպաւորութիւններուն յառաջ բերած ճշգրտումներուն լաւ ու սպիտակ ուղղութիւն մը տալու գործը՝ ո՛չ թէ ուսուցչի մը այլ միայն ծնողական հսկողութեան, հրահանգներուն և դաստիարակութեան կը պատկանի:

Այս ամէն իրողութիւնները կը պատրաստեն օրիորդ մը որ ապուշ չէ, որ գիտէ կշռել իր էութիւնը և կացութիւնը, որ ամուրիի և ամուսնական կեանքի պայմաններուն հմուտ է, կուսական համեստութեան հետ անմեղ զգացումներու դրոշմը անվթար է պահած, և որ իր չինած մտատիպարին կրնայ ճարակ տալ այն ամէն բարոյական ու հոգեկան վայելումներով՝ որոնց ակը կը գտնուի գրական ու արուեստագիտական ամէնաընտիր ներշնչութիւններու մէջ: Ցաւալի է որ մարդը և իրը լաւ ճանչցող օրիորդներ յաճախ ընկերային անշահ պատշաճութիւններու զոհ կ'երթան, թաղելով իրենց տեսականը բռնի ամուսնութեան մը խաւարային անդունդին մէջ: Եւ երբ իրենց երազած գաղափարական գաղաթնակէտէն գլորելու կը հարկադրուին՝ այն ատեն անկարգ ու խառնակ կեանքի մը սեւաթոյր քրքիշներուն մէջ վիշտերու մոռացում կը փնտռեն:

Իբրեւ վտանգաւոր կանացի պատուոյն՝ թող թիւրամիտ բարոյախօսներ չը դատապարտեն նահապետական այն պարզ կեանքը՝ որուն մէջ շատ կոյսեր անդորր կեանք մը կ'անցնեն, հեռի կիրքի փոթորիկներէն՝ որոնք ստէպ ամենէն անմեղ հոգին իսկ կը փռչիացնեն:

Թերեւս առարկուի թէ կանանց այս ազագոյնագրութեան շրջաններուն մէջ՝ կինը պէտք է ըլլայ այր մարդուն չափ արթուն ու խորագէտ, պէտք եղած ատեն դիմագրաւելու համար իր թշնամիին, որ միշտ էրիկմարդն է: Վասն զի սեռական խտրողութիւններ ու անոնց հետեւանքները պիտի վերնան, նոր բժշկական դպրոցի մը բնախօսական՝ սկզբունքներուն համեմատ՝ կուսական նախապաշարումներն ալ պիտի ջնջուին, և երբ այր ու կին դէմ յանդիման գան՝ պիտի կարող ըլլան իրենց պարաքն ու իրաւունքը ճշդել:

Հիմա, երբ կինը այս յաշնողութեան ճամբուն վրայ է եւրոպայի մէջ, եթէ ընտանեկան յարկէն հեռի իրական աշխարհի կրքերուն հետ շփուելու սահմանուած է, եթէ վերջապէս, ան ո՛չ միայն իր այլ այր մարդուն բնախօսական ու զգայական դրութեան հմուտ է տակաւին չամուսնացած, եթէ պարզամիտ եւաներուն դարը անցած է և ամէն օրիորդ Գիտութեան Ծառին ինքնութիւնը ճանչցած է, ի՞նչ հարկ կայ քաղցնէր կարգալ, անոր ենթագրական անգիտութենէն յառաջ դալիք անպատեհութիւնները նշանակել: Դժբաղդապէս եւրոպացի կինը այժմ շատ աւելին զիտէ քան ի՞նչ որ պէտք է, աւելի լուսամիտ, փորձառու և իրապաշտ է ան՝ քան իր արեւելքցի քոյրը, որ իր համեստ, անշուք ու տգէտ սահմանին մէջ այնքան գայթակղութեան օրինակ չըլլար՝ որքան արեւմտեանը:

Մեր կիները իրենց նախնական պարզութիւնը և կնոջական յատկութիւնները պահած են: Մեծանուն գրագէտ մը ուշադրաւ յօդուածի մը մէջ կ'ըսէր թէ, Արեւելքի մէջ համեստութեան զգացումը և ընտանեկան պատուոյ դաշտափարը դեռ եւս աւելի շատ ոյժ ունի, ապօրէն կենակցութեան դէպքեր աւելի հազուադէպ են, ու հաւատարմութիւնը իբրեւ բարոյական պարտաւորութիւն կը նկատուի, քան թէ Արեւմուտքի մէջ՝ ուր ապօրէն կապակցութիւններու սահմանը այնքան ընդարձակ է: Եւ սակայն այսպիսի բարքի ենթակայ ժողովուրդներու զաւակները չեն կրնար անմեղ մնալ, այլ չափահաս չեղած իսկ ուսած ըլլալով կենաց Պայմանները՝ անոր մէջ մտնելու մարմաշով կը տառապին: Ուրեմն եթէ կայ իրական վտանգ մը, այն ալ կրնայ ծագիլ կանխահաս արքնութենէ և դիւրագգացութենէ, յարաբերութիւններու տեսակէն:

Չենք ըսեր թէ արեւելքցի աղջիկը անվրիպելի է: Մեր նպատակը կուսական տգիտութիւնը պաշտպանել չէ, այլ կ'ուզենք դիտել ալ թէ՛ յոյսի զաւակները աւելի յուռի դրութեան մը մէջ են: Եթէ եւրոպացի օրիորդներու պէս մերիները փիզիքական ու բնախօսական երեւոյթներու վրայ գիտական դասեր չեն ընդունիր, չգոնէ ունին անոնք մայր-դաստիարակուհիներ, որոնք ամենայն փորձառութեամբ և գաղտնապահութեամբ ժամանակին կը հաղորդեն անոնց Գիտութեան Ծառին վրայ այն ծանօթութիւնները՝ որոնք պիտանի են աղջկան մը համար, երբ Բնութիւնը իր այլադունակ նշաններով արդէն կը խօսի անոնց սրտին ու երեւակայութեան:

ԲԵՐՈՒՋ ԶԱՏԻԿԵԱՆ

ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ

ՇՈՒՐՁ

Թատրոններու, Դերասաններու եւ Դերասանուհիներու

ՈՐՔԻԲԵՐԱ

Ամէն անգամ Օր. Լիան տը ... ի կամ Օր. Իզապէլ տը ... ի հետ կը մտնեմ Թատրոնին դռնէն ներս, ներեցէ՛ք որ անգամ մըն ալ Հանրագիտակի ընթերցողներուն եւ ընթերցուհիներուն հետ — սիրելի բարեկամներս ամէ՛նքն ալ — այցելեմ Բերայի բոլոր Թատրոնները:

Մուտքի գինին մասին հոգ մի՛ ընէք, եթէ contrôleurը ձենէ տոմսակ պահանջելու անբաղաճաճարութիւնը գործէ, բաւական է որ զիս մէյ մը ցուցնէք. — ձեզի անմիջապէս ... դռնէն դուրս կը նետեն:

X

Ձմրան երկար գիշերները ... o', ma barbe ?

Ամենակարող Աստուած իր անսահման ու շրմուկեամբ կարծես երդում ըրած է խեղճ մահկանացուներս երբեք հանգիստ չթողուլ, ո՛չ միայն ցորեկները, այլ նաեւ գիշերները:

Ամրան գիշերները՝ ճանճերը, մուկները, փայտոջիւները եւ նմանօրինակները ունինք, որոնք, պէտք է ըսել թէ, ժամանակ չեն շնորհեր մեզի բնաւ մրափելու:

Եւ՝ ասեղապատ տակառներու վերածուած մեր անկողիներուն մէջ toupieի պէս դառնալով, հազար անգամ փութ կը քաշենք ձմրան գիշերներուն, քիչ մը կարենալ քնանալու համար:

Ա՛խ, ձմեռ, ո՛ւր ես:

Ձմեռը, ճի՛շդ, ժամադրութիւն տուած վայրկեանին, կուգայ կը հասնի, ու հիմակ ալ կը սկսինք տրտնջալ ձմրան գիշերներուն դէմ:

Եւ բնութիւնը կը շուարի կը մնայ թէ՛ մեզի գոհ ձգելու համար ամրան գիշերները տայ թէ ձմրան գիշերները:

Տասներկու քարդի սկամպիլ կը խաղաս, քսանըջորս անգամ կը քննաս ու կ'արթըն-

նաս, կ'արթննաս ու կը քննաս, դա՛րձեալ առտու չէ եղած:

Ամառը՝ դեռ քունը աչուկներէ դ վազած ատենը, կը նայիս սքաղաղները կ'երգեն, սթափեցնելու համար քեզի քունէդ, ինտոր որ երկու հազար տարի առաջ ալ երգեցին՝ Պետրոս առաքեալը իր մեղապարտ ուրաջումներէն սթափեցնելու համար:

Մինչդեռ հիմա՝ քանի մը ամսուան ի հաշիւ քուն կը քննան, եւ դարձեալ մութ է:

(Ամէն պարագայի մէջ, այս տողերը ինծի համար չեն, որովհետեւ, ես, գարուն, ամառ, աշուն, ձմեռ, անփոփոխ կերպով, լուսնալէ ժամ մը ետքը կը պառկիմ եւ մութնալէ ժամ մը առաջ կ'արթննամ: Սկզբունքի խնդիր):

X

Ձմրան գիշերները — sans indiscretion — դուք ինտո՞ր ժամանակ կ'անցընէք:

Բոքէ՞ր կը խաղաք, ձմրան գիշերներու պատմութիւննէ՞ր կը կարդաք, թէ իրարու միս կուտէք:

Ասոնք ձե՛ր գիտնալիք բաներն են, մէյ մըն ալ ... ձեր խոստովանահօրը:

Ես ոչ չեմ զանախան կը խաղամ, ո՛չ ալ քնանալու համար շագրագի կը կարդամ, այլ միմիայն թատրոն կ'երթամ:

— Դիշեր մըն ալ չքնանա՞ս, կ'ըսեն շատ անգամ բարեկամներս իմ թանկագին առողջութեան վրայ դողդալով:

Հանդերձեալ կեանքի մէջ ա՛յնչափ երկար եւ առանց արթննալու պիտի քնանանք որ, այս աշխարհին մէջ ո՛րչափ ալ լուսցընենք, նորէն քիչ է:

X

Ու քանի որ սիրելի բարեկամս Պ. Առման Լավառէդ աշխարհիս չըջանը կ'ընէ, Ժիւլ Վէռն՝ լուսնին չըջանը եւ Հանրագիտակին ցրուիչը ամէն շաբթու, բաժանորդու-

թեան չըջանը, ներեցէ՛ք որո՞նք ալ մէկ անգամուան համար Բերայի թատրոններուն չըջանը բնեմ, մասիտ ու թուղթ ի ձեռին, տեսածներս ու լսածներս նօթագրելով:

×

Բըդի-Շանի թատրոնին մէջ հիմակու հիմա Գազնէօվը կայ, — Խազնէօվը՝ ինչպէս կ'անուանէն galerieին հանածվարածները:

Սառա Պէռնաուը եկաւ, թատրոնը կէս էր, Նովէլլին ներկայացումներուն՝ թատերասրահը շատ բաց տեղեր ուներ, Գոգլէնին բաւական օթեակներ կային պարապ, ու Գազնէօվին ասեղ նետելիք տեղ չկայ: Ինչո՞ւ: Որովհետեւ մեծն Սառա, Նովէլլի ու Գոգլէն մէյմէկ արուեստագէտներ էին, մինչդեռ Գազնէօվ վարժ ձեռնածու մըն է: Ահա՛ տարբերութիւնը որ կայ ձեռնածութեան ու արուեստագիտութեան մէջ:

×

Գազնէօվին համար կ'ըսեն թէ շատ մեծ մարդ է, մի՛ հաւատաք, կէս կանգուն հասակ մը ունի միայն:

Շատախօս մի ըսիք, մե՛ղք որ կուսակցութիւնները շատախօսութեան չաստուած մը չէին հնարած, անվիճելի կերպով Գազնէօվ պիտի ըլլար այդ չաստուածը:

Տարիքէն անպատճառ տասը աշուններ վըր զեղջէ եւ ինքզինքը երիտասարդացնելու համար ... վաթսուներ հինգ տարու եմ կ'ըսէ:

Երեք ակնոց ունի գրպանը, մէկը՝ փողոցի համար, միւսը՝ կարդալու յատուկ, իսկ երրորդը՝ կիներուն հետ խօսած ատենը կը գործածէ միայն:

Իր անձնական յիշատակները առնուազն 1850էն ձերք կ'ընեն, ինչ որ անշուշտ զինքը շատ չերիտասարդացներ:

Պեխերուն ծայրերը ա՛յնչափ ոտը են, որ կրնան ասեղի մը ծակէն անցնիլ:

Քթին մէջէն ոսկիներ կը ժողվէ, ամէնուն վրայէն ոսկիներ կը հաւաքէ, միայն իր գրպանը ... պարապ է:

— Այո՛, կ'ըսէր անցեալ օր մտերմական տեսակցութեան մը մէջ, մարդիկ զիս շատ գնահատեցին ...

Ու հեգնական տխուր շեշտով մը կ'աւելցնէր.

— Ծափերով:

Մտածումներու փոխանցումին մէջ ա՛յնչափ վարպետ է, որ՝ դիմացինին միտքէն անցածը կը հասկնայ:

Անցեալները ճաշի մը ներկայ էր, պահ մը խօսակցութիւնները ընդհատեցան:

— Ես հիմա ձեր մտածածը դիտեմ, ըսաւ Գազնէօվ՝ խօսքը դիմացինին ուղղելով:

— Ի՞նչ կը մտածեմ կոր, հարցուց միւսը թերահաւատ շեշտով մը:

— Կը խորհիս թէ ժամը քանի՛ է. սա կայն, հոգ մի՛ ըներ, դեռ կանուխ է:

Իրօք ալ միւսին մտածածը ա՛յս էր:

Գալով իր nièce ու élèveին՝ Օր. Ռէն Տէգոլանժին — Օր. Թագուկը պիտի ըսէինք մենք — ան ալ իր ճիւղին մէջ յաջող médium մըն է:

Անցեալ օր, հանդիսականներէն մէկը — որ ապահովաբար կենցաղագիտական նօթեր չէր կարդար — մտացի հարցում մը ուղղեց Օր. Տէգոլանժին:

Որուն՝ Գազնէօվին սրամիտ élève ու nièceը պատասխանեց շատ յարմար կերպով:

×

Ու երբ վարագոյրը կը գոցուի՝ վերջնականապէս հանդիսականներէն բաժնելով մեծանուն prestidigitateurը, բացատրութիւնները կը սկսին կարգ մը քիթիփիթոսներու կողմէ, սրունք զուխնին կը ճաթեցնեն եղած լուսերը գուշակելու համար:

— Ինտո՞ր ըրաւ:

— Ի՞նչպէս չինեց:

— Ադ ալ բա՞ն մըն է, սանկ ըրաւ, նա՛նկ ըրաւ:

— Զէ՛ անանկ չըրաւ, այլ նա՛նկ ըրաւ, սա՛նկ ըրաւ:

— Այնպէս ալ չէ՛, սիրելիս, սապէ՛ս ըրաւ, ա՛յնպէս ըրաւ ... մինչ Պ. Գազնէօվ տաքուկ անկողնին մէջ կը մտնէ՝ մէկ գիշերուան յիսուն ոսկիի զուտ շահուն վրայ անուշ երազներ ընելով:

Ամէնէն զարմանալին սակայն ա՛ն է որ, երբ ոմանք քիչ մը գուշակեն prestidigitateurին

ըրած տուք, յուսար կ'ըլլան ու կը տրտման:

Չեմ գիտեր թէ՛ ըսող եղած է բնաւ իրենց թէ՛ Պ. Գաղնէօվ գիտութեան կողմէ զրկուած պատուիրակ է եւ Բըդի-շանի ամփիթատրոնին մէջ զարմանալիքներ պիտի գործէ:

Ընդհակառակը, մարդը ամենայն խըղճմըտութեամբ աւելցուցեր է իր անունին տակ Վոգգապագո մակդիրը:

Վերջացնելու համար, սա միջոցին Բըդի-շանի թատրոնին մէջ երեք երջանիկ մահկանացու կայ. — Պ. Գաղնէօվ, Օր. Թագուկ Տէգօլանժ եւ Պ. Սթավրո Բաբատուրօ:

Սակայն, le plus heureux des trois — comédie en 3 actes. — դարձեալ Պ. Սթավրաքին է:

×

Բըդի-շանէն Գոնգորտիա՝ տասը քայլ միայն է:

Կ'անցնինք Կլավանի փողոցէն եւ կը մըտնենք Գոնգորտիայի դռնէն ներս:

Թատրոն՝ ... վառարան յառաջդիմութեան, դպրոց դաստիարակութեան, տաճար բարոյականի:

Ապահովաբար այս բառերը Գոնգորտիայի թատրոնին համար չեն արտասանուած կամ այս նախադասութիւնը չինողը գիտնալու չէր հարկաւ Գոնգորտիա անուն թատրոնի մը գոյութիւնը, ապա թէ ոչ երբէք ատանկ բան պիտի չըսէր:

Գոնգորտիա՝ ... տաճար բարոյականի, ô ma chère!

Հոն՝ ձայները չեն որ կ'երգեն, այլ սըրունքները, առդիսները չեն որ կը խաղան, այլ foyerին մէջ՝ շաւրանիայի շիշերուն քափաները:

Այսօր կարդացի թէ Ամերիկայի մէջ տըգեղութեան մրցում մը բացուեր է. — (ա՛չքըդ լոյս Լիդըլ Բիլ):

Եթէ երբէք օր մը ճաթած ձայներու մրցում մըն ալ հաստատուելու ըլլայ, Գոնգորտիայի թատրոնը պիտի կրնայ բաւական հայթայթումներ կատարել:

Թո՛ղ որ եթէ քիչ մը համեստութիւն չընելու ըլլայ, տգեղութեան մրցումին ալ կրնայ արժանապէս մասնակցիլ:

Երգչուհիները.

Գերմանացի, Ռուսացի, Սպանիացի, Հոլանտացի, եւ նոյն իսկ հատ մըն ալ... Հայուհի:

Ճշմարիտ քարհանա չօրպաւի մը, որուն խառնուելու պատիւին արժանացեր է նաեւ մեր համայնքէն մէկը. — ո՛ր պարծանք:

Մեզի վերաբերեալ ուրիշ պարծանք մըն ալ: Սիրելի բարեկամս Ռաֆայէլն է, որ ընկերակցութեամբ Չինկեանէ-Գօսթիի, բանդօմիսանի Սթէյլիօի եւ Գառնիկ աղայի գեղեցիկ գլուխներ կը ներկայացնէ:

Իպի՛շ ... կը ձայնէ Գառնիկ աղա:

Եւ Ռաֆայէլ բեմ կուգայ, իպիշական դասական տարադուր, մինչ Գոնգորտիայի poulastrին ծաղիկները — Գոնգորտիայի պանդուկին գիշերային մնայուն յաճախորդները — կը ճաթին խնդալէ անոր ամէն մէկ խօսքին:

Գոնգորտիայի մէջ, մեր անցեալ տարուան պարծանքն էր Անտոն Բասգալը, որուն ալիւրապատ դէմքին ի տես՝ ամէն սիրտ կը բաբախէր, խորհելով թէ՛ «Այս քաշիս չօն խիստ վարպետ է»:

Գոնգորտիայի բո՛ւն ներկայացումը տեղի կ'ունենայ ո՛չ թէ թատերարեմին վրայ, այլ foyerն:

Կ'ուզէ՞ք որ պահ մը հոն ելլենք:

Բայց, չէ՛, հետեւինս Հանրագիտակի ամօթխած ընթերցողները կան:

Ուրիշ օր մը en garçon հոն կ'ելլենք՝ Թաշսէրէնի ջուրով փառաւոր ... հովարտայութիւն մը ընելու համար:

×

Սիրելի բարեկամս Սքէնտէրիտէսը — ուրիշ հոգաւոր մը — տեսնելու համար Բըրիսթալի սանդուխներէն վեր ելայ:

Գաղնէօվը (Բըդի-շան), Սքէնտէրիտէսը (Բրիսթալ), Լա Ֆօնթէնը (Իւնիօն), եւ եթէ անունը չեմ սխալիր Իվանօֆ մըն ալ (Թաքալիայի քարձուկը):

Յայտագիրներուն մէջ կարդացի.

SKENDERIDÉS

Prestidigitateur Amusant

Չըլլա՛յ որ այս խոստումէն խաբուելով՝ գրօնելու միտքով երթաք զինքը տեսնելու:

Ես Սքէնտէրիտէսը դիտելով ա՛յնչափ
զուարճացայ, որ քիչ մնաց պիտի լսյի:

Անգին Գազնէօվը ո՛րչափ շատ կը խօսի,
ասդին Սքէնտէրիտէսն ալ կը լռէ, որովհե-
տեւ թերեւս Գազնէօվն աւելի ազէկ գի-
տէ խօսքին արծաթ, լուսթեան ոսկի ըլլա-
լը, թէեւ, իրականութեան մէջ, Գազնէօվ
խօսքով ոսկի կ'ընէ, մինչ Սքէնտէրիտէս
լուսթեամբ ո՛չ իսկ արծաթ:

Նշուշտ սակի յարմար պիտի ըլլար, ե-
թէ յայտագիրներուն մէջ գրուէր:

SKENDERIDËS

Prestdigitateur triste ?

Աւելի eff-ի պիտի ընէր այս եւ աւելի ...
ճշմարտանման պիտի ըլլար գոնէ:

Շիտակը ըսելու համար բան մը չհաս-
կեցայ Սքէնտէրիտէսէն եւ մտայ foyerէն
ներս՝ սուրճ մը խմելու համար, ուր պա-
տիւր ունեցայ ներկայ գտնուելու երգչու-
հիններու կոնի մը, խիստ շահեկան ու
խիստ ... անբարոյական:

Տեսէք խնդիրը՝ առանց անունի անշուշտ:
Բերացի ամէնուն ծանօթ վաճառական-
ներէն մէկը կատարեւապէս լրիկցած ու քա-
նի մը ուսամերկ երգչուհիներէ չընկալաւ
ած՝ կեանքին ֆէյփը հանելով զբաղած էր:

Առջեւի սեղանին վրայ շարուած շամբա-
նիայի շիշերը համբեցի. — ճիշդ վե՛ց հատ,
ճիշդ վեց ոսկի, սերմայէն՝ վաթսուն զրուշ,
(ո՛ վաճառականութիւն):

Կիները՝ կուտաւոր miché գինովցուցած
ատեններին՝ իրենք ալ բնականաբար ալ կ'մը
լրիկցած էին:

Ասոնցմէ մէկը — Ֆրանսուէի մը՝ ամէ-
նէն հանած վարած ու գնչուական տեսակէն —
ա՛լ չկրնալով խմել, քաշուեցաւ կորկոշը
michéին քովէն, որուն վրայ միւս երգչուհի
մը սկսաւ բողբոջել:

— Խմելու սկսելէ ետք՝ մարդը ասանկ
չէն ձգեր երթար:

— Քիչֆս անա՛նկ ուզեց անա՛նկ ըրի,
պատասխանեց Ֆրանսուէին՝ լեզուն բերնին
մէջ հալել կարողանալով դարձնել:

— Ըրածդ անվայել բան է. ouvertureին
ներկայ գտնուելէ ետք պէտք է finalին ալ
ներկայ ըլլալ:

— Ես finalը քեզի կը թողում:

— ô ma chère ...

— ô ma chère ...

Եւայն, եւայն, եւայն:

Պէտք է գիտնալ թէ երբ կիները սկսին
իրարու ma chèreով խօսիլ, կոնը ու ծեծ-
կուռքը մօտալուտ է:

Կիներու հոգեբան վիպասան Բօլ Պուր-
ժէին հարցուցէք:

×

Բերայի Սիւքը. — տնօրէն՝ Տօն Լուիճի
Ռոքա Ռամիրէզ:

Երբ թատրոնի մը տնօրէնին անունը ա՛յս-
չափ կնճռոտ է, ինտո՞ր կուզէք որ այդ
թատրոնին գործերը նուազ կնճռոտ ըլլան:

Դրան առջեւ դէմս կ'ելլեն խումբին յի-
ստիսն արուեստագէտները մէկանց, ո՛չ թէ
ի պատիւ ձեր խոնարհ ծառային ընդ առաջ
գալու, այլ պարզապէս տոմսակս պահան-
ջելու համար, մինչ Լիդըլ Բիջը առաջ անց-
նելով, ըսաւ լալկան շեշտով:

— Uou ... բերդու ... 2500 ֆրանս ...
Uou ... մեղազօղիք ... պրօզու ...:

— Ուրեմն մնաք բարով:

Ու Սիթէ տ'Ալէքի դրան առջեւ դէմս
ելաւ Տօն Լուիճի-Ռոքա Ռամիրէզը, որ օ-
ձիքէս բռնելով՝ սկսաւ խօսիլ իր ակադեմա-
կանի ֆրանսերէնով:

— Uu սինետո թօլայեան, demain je
donne un grand bénéfice, faites moi une bonne
réclame !

Չարմանալի է սա Ռամիրէզը:

Տարին տասներկու ամիս նպաստ կուտայ
եւ դարձեալ չի գոհանար:

×

Օտէոն՝ յունական օբէրայի խումբ:

Երկուշաբթի՝ Ֆաուստ:

Երեքշաբթի՝ Բալիաչի եւ Գալալիէոս:

Չորեքշաբթի՝ Ֆաուստ:

Հինգշաբթի՝ Բալիաչի եւ Գալալիէոս:

Ուրբաթ՝ Ֆաուստ:

Շաբաթ՝ Բալիաչի եւ Գալալիէոս:

Կիրակի՝ Ֆաուստ ... et ainsi de suite !

Եթէ յոյնի մը հարցնելու ըլլաք, տալիք
պատասխանը ապահովաբար սապէս է.

— Հիանալի՛, սքանչելի՛, հրաշալի՛ ...

Ես հեղ մը Ֆաուստին գացի:

Ու ինծի ա՛յնպէս թուեցաւ որ՝ Ֆառուղը սափրիչի աշկերտ մըն էր կարծես, Մէֆիսթոֆէլը՝ կօշկակարի աշկերտ մը, իսկ Մարկըրիթը՝ Բառէի խանութին կարուհիներէն մէկը:

Գալով ձայներնուն՝ պէտք է ապահով ըլլալ թէ այդ երգիչներէն ո՛չ մէկը կը յաւակնի օրին մէկը Բազզի մը կամ Կառուսօ մը ըլլալ: Համեստութիւն, quai ?

X

Ո՛ւֆ, թատրոններու կազերուն լոյսէն աչքերս կուրցան:


Արդեօք ժամը քանի՞ է:

Tiens! քիչ մնաց կը մոռնայի կոր: Երէկ ժամացոյցս քօաներկու գրուչի ... կարդացուցի:

Հիմակուհիմա՝ գիշեր բարի:

Գալ չարթու նորէն կը տեսնուինք:

ԵՐՈՒԱՆԴ ԹՕԼԱՅԵԱՆ



ՄԱՐԳԱՐԵԱՆ ԳՐԱՏՈՒՆ

ՀԱՍՏԱՏԵԱԼ 1805

Կ. Պոլիս, Սեբեաստիական փողոց, թիւ 57

Օսմանեան Պատմութիւն մինչեւ մեր օրերը Մ. Ա. Ջեմալ Ղը. 4

Գոհարմասեանիկ, Երկսեռ վարժարաններու ուսանողներու ընթերցման արժանի լաւագոյն դասագիրքը Ղը. 5


Զրուցարանի Ընթերցարան. տարրական կարգերու իր տեսակին մէջ բոլորովին նոր Ղը. 3

Մանկավարժական Քերականութիւն. Գ. մաս. պատկերներու վրայ իր աննման ոճովը կը սորվեցնէ Հայերէն Քերականութիւնը Ղը. 4

Հայերէն Լեզու կամ Վարժութիւն Գրաբարի, Կ'ուսուցանէ զրաբարը հասկնալ ու թարգմանել, առանց հոլովներու ու բայերի ի բերան սովորեցնելու: Ղը. 4

ԿԱՐՃ միջոցի մէջ Անգլիերէն կամ Ֆրանսերէն սովորիլ փափաքողներու միակ գիրքը ՄԱՅՍԹԵՐՍԵԱՖԹ ՍԻՍԹԵՄ. 15 տետրերու գինը Ղը. 30

Առողջաբանական Մարմնամարզութիւն. 45 պատկերով, առանց գործիքի. ամէն տուն պէտք է ունենայ այս գիրքէն Ղը. 5:



Դիսե՞ս որքան կը փափաքիմ, ո՛վ հուրի, Դիշերուն մութ պահ մը շունչդ լոկ ծրծել, Ու զիրգ մարմնդդ անոյշ բոյրովն հոյանի՝ Զգիսիլ քու մազերուդ մէջ ոսկեթել:

Զգացումի նեխարն անոյշ, հրեղեն՝ Ըմպել հոգով, ու քեզ հրծել մեղմօրօր, Ո՛հ, գալարի՛չ ու զրգոնիլ կըրակեն՝ Զոր պիս՝ զգամ կուրծիդ վրայ մեղրածոր:

Եւ քափանցուիլ քիչինքովդդ աղջկան, Մասաիի պէս յսակ, վրձիս ու մաքուր, Պահ մը քաղուիլ երազի մէջ խօշական, Գլուխս ուսիդ դրած՝ զգալ կիրք, սարսուռ:

Ո՛հ, բոցոսի՛չ, կրակ կսրիլ զրգիւնով, Զղայիկ վեհ սարսուռ զգալ ու անկեան, Սուրբ ծոցիդ մէջ մոլեգնութեամբ անխրոնով, Պրկրուիլ ու արձանանալ լուսնայն:

Եւ կը ցանկան, հիւանդ սրտս ապիկար, Սփոփում քալ ու քեզի հետ՝ ապրիլ դեռ, Բազումներուս մէջը սեղմել քեզ սրկար, Թրթռալով վարդիդ շուրջը զերդ քիթու:

ՍՈՒՐԱՏ ՍԱՐԴԱՅԵԱՆ

ՇՆՈՐՀԱԻՈՐԱԿԱՆ

Խմբագրութիւնս կը փութայ իր ջերմ շնորհաւորութիւնները յայտնել Առեւտրական սենեկի (Chambre de Commerce) Ա. Քարտուզար Ազն. Զարեհ Էֆ. Նուսուֆեանի շնորհում Սանիեի աստիճանին առթիւ:

Նուսուֆեան Էֆէնտիի արժանիքը եւ կարողութիւնը ստանձնած պաշտօնին մէջ արդէն ամէն զովեստէ վեր է, որով այս անգամ կարժանանայ Նորին Կայսերական Բարձր գնահատման:

Զերմապէս կը խնդակցինք մեր մեծայարդ պաշտօնակցին վիճակած աստիճանի բարձրացման համար:



Յօդուածներուն մեջ ո՛րքան մեղամաղ-
ձիկ՝ նոյնքան զուարթ ու զուարճախօս տղայ
մը: Կեանքին նպաստի ընտրած է միայն
մեկ բան՝ Գեղարուեստը. զայն կը ճանչնայ
ու ան կը սիրէ: Aufont, ճշմարտապէս բարի
տղայ մը, սրամիտ եւ պերճախօս:

Եթէ փողոցը տեսնաք թուի երիտասարդ
մը որ կը խօսի ու կը խնդացնէ իր ընկերը,
կամ սոսանձիկ կը փաշէ գլխահակ ու մտած-
կոտ, անտարբեր՝ գիտցե՛ք թէ ԱՇՈՏ ՄԱՏԱԹ-
ԵԱՆՅԱՆ է ան, երիտասարդ արուեստասէրը:

ԱՐՈՒԵՍՏԱՍԷՐԻ ՄԸ ՅՈՒԹԵՐԸ

Ա՛յնքան բուռն եռանդ մը ունէի եւ ա՛յն
առտիճան անդիմադրելի սէր մը՝ որ այլ
եւս կարող չեղայ վարժարանական չըջանա
չարունակել, ուստի 1899-900ին, տասն եւ
ինը տարեկան հասակիս մէջ թողուցի վար-
ժարունը: Պէրպէրեանական դասընթացքը
աւարտելու երկու տարի կ'ուզէի, ասոր հա-
մար՝ այս սնունդիս լքումս վարժարանին՝
կարգ մը բանավէճերու պատճառ եղաւ իմ
եւ ծնողիս մէջ: Չէի ուզեր զպրոց յաճա-
խել՝ տհա՛ այսչափ, պատճառը չէի պար-
զեր, չէի ստեր ալ, որովհետեւ կեղծ պատ-
ճառարանութիւններ յօրինել ընդթէս չատ
հնուի էր: Կ'որոշեմ՝ ու կը գործադրեմ՝ ա-
ռանց մէկին խորհուրդ հարցնելու եւ առանց
ըրաժիս բացատրութիւնը տալու:

Ի՞նչ կրնայի խօսիլ անանկ մարդերու ու-
րոնք իմ ընտանիքիս մեծերն են, եւ որոնք
դերասանութիւնը անպատիւ կը նկատեն ի-
րենց գերդաստանական անունին, որոնք այդ
արուեստին վրայով լաւատես ըմբռնում եւ
համոզում չունին, որոնք աղտոտ ու զաղիր,
գարշ ու ստորին կը համարեն այդ իսկապէս
բարձր, ճշմարտապէս վեհունակ Գեղարուես-
տը: Եւ սակայն մասնաւոր կերպով ցաւ ու
արգահատանք չէի զգար ծնողներուս հան-

դէպ, քանի որ այդ տգիտութիւնը, այդ
անհասկացողութիւնը միայն անոնց մէջ ար-
մատացած չէր՝ այլ շատերու, եթէ այս
մասին վշտալի անձկութիւն մը սիրտիս մէջ
կեանք ունէր՝ ա՛յն ալ ամբողջ համայնքի մը
նկատումով էր. խեղճե՛րը, չէին հասկցած
ու չը պիտի հասկնային:

Ընտանիքիս ստիպումին վրայ՝ քանի մը
ամիս յետոյ վաճառական կարեւոր հաստա-
տութեան մը մէջ պաշտօն մը ունեցայ: Հի-
մա աւելի՛ մօտէն ճանչցայ այլուզան տգե-
ղութիւններուն եւ ստորնաքարչ կեղծաւո-
րութիւններու ասպարէզը, զոր Առեւտրա-
կան աշխարհ կամ վաճառականութիւն կը
կոչեն. ներքին զգուանքս աւելի կարկառուն
ու ցայտուն դարձաւ: Ինձի համար աւելի
հեշտ, աւելի դիւրատար էր Գեհէնի կեանք
մը՝ քան այս, սակայն ստիպուած էի մնալ՝
քանի որ չէի ուզեր ծնողիս գիտակցու-
թիւնը իմ սրտային ու մտային վիճակիս:
Ա՛խ, չարչարանք մըն էր ինձի համար ապ-
րիլը անանկ ասպարէզի մը մէջ՝ ուր ո՛չ
բարոյականի սկզբունք մը եւ ո՛չ ալ ազնիւ
նպատակ մը կայ, ուր գաղափարի մարդ մը
եւ զգացումի հիւլէ մը իսկ գոյութիւն չունի.
անաւանական կեանք. չէ՛, լարուած մեքե-

նականութիւն մը՝ անգգայ ու անխորհուրդ, գոռոզ ու անգուժ:

Երկու ամիս անցած էր երբ կը հրաժարէի պաշտօնէս: Բարոսն անարգանք մը քրած էր ինծի, ու արուեստագէտի վես ու հետ բնաւորութիւնն չէր կրնար հանդուրժել այդ անարգանքին մարդու մը՝ որ զբաւաւրում միայն ունէր: Այդ օրէն բովանդակ արհամարհանքս ու նողկանքս թուքի՝ այդ ասպարէզին ճակտին, անդարձօրէն հեռացայ՝ հետս ունենալով անբաղդատելի սեւ ու թեան մը անխախտ գաղափարը՝ այդ կարգի անազնիւ մարդերուն հանդէպ:

Հիմա նորէն ազատ էի: Շարունակ Մընակեանին փորձերուն եւ խաղերուն ներկայ կը գտնուէի: Դերասանապետին հասկցուցած էի թէ ծնողներս թոյլտու չէին, ու անգիտակից էին մի եւ նոյն ատեն դերասանութեան հետեւելուս, այս պատճառով Մնակեան փորձել կուտար ինծի դերեր ու բեմ չէր հաներ: Այս միջոցին փորձեցի Մատամ Սէն Թորէզէն՝ Շարլ տ'Առպէլը, Կոյր Մարքիզուհիէն՝ Ռօպէռը: Հոս պէտք է ըսեմ որ այս փորձերը միայն Մնակեանին ներկայութեանը կը կատարէի:

Տրամաթիք դերերուն մեծ փափաք մը ունէի: Սիրահարի դերէն զատ կը սիրէի ամէն կարգի դեր, եւ սակայն ասոր հակառակ միշտ կ'ուզէին որ սիրահարի ճիւղին աշխատիմ, այնպէս որ ցաւ զգացի երբ Զաւեշտախումբին արուեստագէտներուն ցանկին մէջ՝ անունիս տակ Jeune Amoureux արձանագրութիւնը կարդացի: Amoureux ճիւղը ինծի համար անհրապոյր էր՝ որովհետեւ անկարելի էր նկարագրի, զգացումի, գաղափարի զանազանութիւն դնել: Սիրահարը սիրահար է, միշտ նոյն խօսքերը, նոյն զգացումը, նոյն նկարագիրը ունի: Ես կը փափաքէի հետեւիլ ճիւղի մը՝ որ իւրաքանչիւր թատերախաղի մէջ իրեն մասնաւոր նկարագիրը, գաղափարը եւ յոյզերը կը յարափոխուին. նոյն մարդը չէս ըլլար այս թատերգութեան մէջ՝ ինչ որ էիր միւսին մէջ. եւ այս՝ Comédienի ճիւղն էր: Կատարեալ դերասան ըլլալու համար պէտք է comédien ըլլալ, այսինքն կարենալ կատարել ամէն կարգի դեր:

Գրեթէ տարի մը յետոյ, ընտանեկան վէճերու առիթ չը տալու համար, փաստափանութեան սկսայ: Հոս ալ հանգիստ չէի, հազիւ տարի մը անցած էր եւ ահա՝ գաղափարը յղացայ Տիխիս երթալով Փալֆառանի հետ գործելու: Այդ դերասանին հետ թղթակցեցայ, պայմանագրուեցայ, ու թողուցի իրաւաբանական ասպարէզը, որ տասր ամառան մէջ յաջողած էի Վիլյազգիր մը սաանալու եւ ուր այնքան ճօն ու պերճ կեանք մը կ'անցնէի:

Եւ սակայն կոյրս չեղայ երթալ:

1903ին սկիզբները Սամ. Զաւեշտախումբէն հրաւիրուեցայ մասնակցելու անոր թատերախաղերուն: Ընդունեցայ: Ահա՛, ասկէ կ'սկսէր գործօն ծառայութիւնս եւ աշխատութիւնս դերասանական ասպարէզին մէջ:

Աւելի քան քսան դեր ստանձնեցի այդ Զաւեշտախումբին մէջ:

Ամէնէն յաջողակ կերպով ներկայացուցած դերերս եղան. Ժափանօն. գիւղացի թոթով զրազէտ մը, Հանրի տը Մօքրուա, պատուախնդիր, մի եւ նոյն ատեն բիրտ ու խիստ կոմս մը, եւ Տիկին Պօնիվառի մէջ՝ բեռնակիր մը: Առաջին դերս եղած է՝ Թուփենիլի Ռյոնները կատակերգութեան մէջ՝ Բիթուան:

Երկու տարի յետոյ, 905 Յունուարին՝ ընկերակցեցայ Մնակեան թատերախումբին՝ Սամսոնի ներկայացումներուն մէջ. Հոգ քանի մը անկարեւոր դերերու հետ, Բիէռտիւ Շըմէնի մէջ ապուշ գիւղացիի մը, Ժիւլի դիրը անձնաւորեցի յաջողակօ էն, ինչպէս ըսին:

Արուեստին մասին շատ լայն, ընդարձակ ըմբռնումներ ունիմ, եւ սակայն ասոնց մէջն կրնամ ամփոփել երկու բառի մէջ.

Բնականին գեղեցիկը:

(Վերջացաւ)

ԱՇՈՏ ՄԱՏԱԹԵԱՆՅ

Զ Ե Կ Ո Յ Յ

Ի գիտութիւն արգոյ բաժանորդաց եւ ընթերցողներուն, կը փութանք զեկուցանել թէ՛ յրուիչ Պր. Արտաշէսի տեղ Ստեփան աղան կարգուած ըլլալով, նախորդը ո՛ր եւ է առնչութիւն չունի թերթիս հետ այսուհետեւ:

ՄՐՏԱԿՑԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՆԻ

Ազնիւ ընկերուհիս

Օր. Թագուհի,

Թէպէտեւ ձանձրացած եմ գրելէ, բայց, քանի որ դո՛ւն ես զիս հարկադրողը գրիչ բռնելու, չեմ կրնար մերժել առաջարկդ: Ցաւեցայ չիտակը մօրդ հիւանդ ըլլալը լսելով: Հիւանդութեան անտանելի ըլլալը գիտնալովս, կը զգամ անոր դառնութիւնները, որոնք մահուընէ աւելի՝ դառն են եւ անկարագրելի: Մահը կ'անցնի կերթայ ու կը մոռցուի, սակայն հիւանդութիւնը ու անբուժելի ախտը կը մնայ, ու դժուարութիւնները կը կրկնապատկեն անոր դառնութիւնները, եւ ուր դրամ ըսուած հսկայ միջոցը մեծ դեր կը կատարէ՝ իր մասին, ինչպէս դուն ալ խոստովանած ես:

Մայրս աղէկ է, բայց ե՛ս ... Ի՛նչ եւ իցէ, գոցե՛նք ...:

Անցեալ օր, երբ բազմոցին մէկ անկիւնը ընկողմանած, գիրքերս կը թղթատէի, ժամանցի պահ մը փնտռելու համար անոնց մէջ, մայրս իմացուց ինձ Տիկին Գլէմանսի հիւանդտեսի այցելութիւնը: Խեղճ կինը իմանալով տկար ... ըլլալս, վազած եկած էր, ձեռքէն եկածը չխնայելու ու քիչ մըն ալ մխիթարելու համար զիս: սիրով ընդունեցինք զինքը: Մանաւանդ ես շատ ուրախացայ այդ զուարճախօս կնոջ այցելութենէն:

Մէօհրիւպէէն լուր ուզեր էիր ինէ, ես ալ՝ քենէ աւելի բան մը չեմ գիտեր այդ օրիորդին մասին, որովհետեւ տունէն դուրս ... չելլալու ստիպուած եմ առայժմ, բայց հանդարտ եղիր, Տիկին Գլէմանսը, զոր հիմա ճանչնալու առիթը պիտի ունենաս, կը յուսամ թէ, շատ բան կրնայ խօսիլ անոր վրայօք: Ահա նպաստաւոր զուգադիպութիւն մը, որովհետեւ, նախ քեզ իմացնեմ թէ՝ Մէօհրիւպէէն լուր մը տալէ առաջ՝ պէտք է Տիկին Գլէմանսը ճանչցընել քեզ, ու նկարագրել զայն, քանի որ լաւ գիտեմ թէ չեմ ճանչնար զանիկա, այդ կեանքի ծովուն ալեկոծ փոթորիկներուն մէջէն ա-

զատած ու իր բաղդին մէկ ապտակով նըսեմացած, լմնցած կինը, զոր Տիկին Գլէմանս կը կոչեն զինք մօտէն ճանչցողները:

Կրկայնահասակ, սեւ բայց անօտր մազերով չըջապատուած զլուխ մը, թուխ ու մարած աչքեր, քիչ մը երկար բայց գեղեցիկ դէմք մը, դալուկ ու տժգոյն այտեր, կանոնաւոր բերան մը ունեցող այս կինը հազիւ 42 տարեկան էր, որուն դէմքին ու ձեռքերուն վրայ՝ անողոք հիւանդութեան մը յետին հետքերը կը նշմարուէին, եւ ուրուն բերանը մերթ ընդ մերթ բացուելով կիսովին թափած ակռաները իշայտ կը բերէին երբեմն, ո՛վ գիտէ, վիշտէն թէ ախտէն վարակուած միջոցին զատուած էր այդ կնոջական ամենապիտանի տարրէն:

Կոկիկ ու կապտորակ պլուզ մը եւ սեւ չըջազգեստ մը, այս էր միօրինակ, անպարթ ու պարզ զգեստը հէզ կնոջ, որ զարդասիրութենէն պժգացած վիճակի մը մէջ կը գտնուէր հիմա:

Բերայի մեր միջավայրին մէջ՝ ընտանեկան բան մը, կնճռոտութիւն մը, հանգոյց մը չդառնար, չանցնիր, առանց Գլէմանսին գիտակցութենէն եւ ուշադրութենէն վրիպելու: Ամէն բանի տեղեակ է ան, ընտանեկան ու ամուսնական ամէն տեսակ հարցերու շուրջ չխնայելու իր օտքերը յոգնեցընել: Կը թռի հոն, ուր որ այդ տեսակ կնճռոտ հանգոյց մը կը հիւսուի, կը յօրինուի: Կրակ ու բոց կին մը ըրած է վերջապէս իր արդի փորձառութիւնը զինք: Վեց տարի է կը ճանչնամ զայն մօտէն, ու անձամբ ճանչնալէ առաջ ալ՝ զինքը լսած եմ անունով:

Գլէմանսը՝ այն կիներէն է, որոնք կը յիշեցնեն մեզ հին հռովմէական գեղեցկութիւնը: Անոր վրայ աղուորութիւն մը կայ դեռ թաքուն, որ իր արքունքի ու աղջկնութեան օրերուն փայլած է: Անոր աղջկնութեան մէկ լուսանկարը տեսած եմ, ուր արհեստէն աւելի, բնական գեղեցկութիւնն ու կոկիկութիւնը կը փայլէ իր օսկեհոյլ մազերուն տակ, եւ ուր դէմքը կը խօսի ինծի անձայն այն ամէնը, զոր գեղեցկութիւնը միայն կրնայ տպաւորել մարդուս հոգիին մէջ:

Երբեմնի՛ պերճ ճոխութեանց ու խրախճանութեանց այդ աղջիկը՝ սահած ու անհետեցած էր ալ հիմա, եւ ... սայթաքած, անօրէնի մը, անգութի մը խօսքերուն յենլով, որ զինք մինչեւ երկինքները բարձրացուցած էին պահ մը. խաբուած էր ան ու վերջապէս լքուած՝ այն վիճակին մէջ, ուր անցեալ կոյսը՝ կի՛ն ... կը կոչուի:

Ընտանեկան ամէն տեսակ 'փայտոյանքէ ու պաշտպանութենէ զուրկ մնացած էր ինք այն ատենները: Թէպէտեւ բաւական հարուստ ընտանիք մը ունէր, սակայն անոնք ժտալիս էին, եւ ինք հոս մեկուսացած վիճակի մէջ ստիպուած էր վարել իր կեանքը աղջկան: Քոյրեր ունէր, որոնք ամէնքն ալ մէկ մէկ դի քաշուած՝ ամուսնացած էին, իրեն ձգելով Բերայի մէջ առն մը ու ընտանեզուրկ քրոջ որդի մը՝ իբր օժիտ:

Հարուստ՝ բայց անփոյթ ու անհոգ հօր մը զաւակն էր այդ խեղճ աղջիկը, որ լքուած վիճակի մը մէջ եկած էր Պոլիս, ուր քանի մը տարի իր քեռհօրը ու մեծ քրոջը քով ճոխ ու փարթամ կեանք վարելէ ետք, ինկած էր միանակութեան ծոցը, կորսնցնելով զանոնք, երկուքն ալ՝ իրարմէ երկերկու տարի վերջ, եւ մնացած էր միմիայն որբօւկով մը: Գոգցես իր ընտանեզուրկ ու նժդեհի կեանքին դառնութիւնները իրեն չէին բաւեր, մէյ մըն ալ երկու տարու պըզտիկ մը աւելցած էր իր գիրկին մէջ:

Ի՞նչ ընելու էր ...: Ո՛ր գիտէ ...:

Ու եւ է մօտաւոր ազգական մը չունէր որ, անոր քով երթար ապաստանէր, եւ կամ անոր բարի խրատներուն առարկայ, սորվէր այն ամէն բաները, որոնք պէտք էին իր մատաղ միտքին ու անփորձ հոգիին:

Իրերու այս ընթացքին մէջ, բաւական ժամանակ տոկալէ վերջ, օր մըն ալ իր անփորձ գլուխը սիրոյ մը կրակին մէջ նետելու անխելքութիւնը ունեցած էր, որ սակայն սուղի նստած էր իրեն համար, գէշ, աննպաստ ու պատուակորոյս վերջաւորութիւնով:

Գէշ հետեւանքի ու միջադէպի մը առջեւ առնելու համար, նախ պէտք է այդ հետեւութեան եւ կամ պատահարին հետամտելու, մխրճելու վիճակին մէջ չգտնուիլ:

Ի՞նչ օգուտ՝ երբ ճակատագիրը, զոր երբեմն բաղդ կը կոչենք, մեզ, մեր անփորձ գլուխները այդ ուղիին, այդ տառապեցնող արահետին խարխալութիւնը մթութեան, ջօշափուելիք մռայլ ամպերուն թանձրութեան մէջ նետէ, ուր պատանի կոչուած անփորձ ու անխելահաս անհատը կը չօչափէ, կը տատանի եւ վերջապէս կը մոլեգնի՝ ... կը սայթաքի՝ անշուշտ ...:

Կամք մը կրնայ ըլլալ անհատին մէջ տըպաւորուած, զրօշուած, առիւծի մը կամքին պէս սլ հուժկու, սակայն, շատ անգամներ տեղի կուտայ, պարագային բերմամբ:

Այսպէս՝ խեղճ աղջիկը, անգութ ու անխիղճ էրիկմարդու մը խարոզ եւ կեղծու պատիր խօսքերուն հաւատք ընծայելով, եւ յուսալով թէ՛ գուցէ օր մը իր անխղճութիւնը կը բարուքէ, ծախած էր իր մէկ հատիկ բնականեցին, տունը, որ փոքրիկ մանջուկին հայրը ձգած էր, իբրեւ օժիտ խեղճ աղջկան: Այդ դրամները, 600 ոսկիի մօտ հնչուն դրամ, միստուած ու ծախսուած էր այդ անօրէնին կողմէն, որ դեռ անխղճօրէն կը շարունակէր իր մնացականի ապօրէն կեանքը, խեղճ աղջկան գիրկին մէջ:

Ի՞նչ ընէր հէգ որբուհին, պզտիկը խնամուիլ կ'ուզէր եւ ինք ալ ապրուիլ:

Քանի մը անգամներ կրկնած էր, ամուսին կոչուելու անարժան մարդուն որ, պսակ մը անցընէ զլխէն՝ եւ ապա՝ քարը իրրեւ հաց քէլ իրեն առջեւ, գոհ պիտի ըլլար ... եւ իրրեւ ամենափափուկ կերակուր պիտի ուտէր զայն: Թող հայհոյէր, իրեն համար հայհոյանքը սիրոյ հոգեզմայլ ածականներու պիտի փոխուէր, քանի որ՝ սիրած էր զայն անգամ մը, եւ ... եւ ... սայթաքած ...: Բայց՝ ի զո՛ւր ...: Դա՛րձեալ նոյնը, կըրկին ...:

Առայժմ այսքանը կը բաւէ, սիրելի Թագուհիս, գիտեմ թէ ժամանակդ սուղ է, եւ զիս ստիկ ընելու ձանձրութիւնը յանձն առած ես, չվշտացնելու համար հիւանդ մը, որ յուսահատած է իր կեանքին: Յաջորդ նամակիս մէջ մնացեալ մասը կը պատմեմ քեզի, եթէ չես ձանձրանար: Շատ մը բաներ ունիմ քեզի ըսելիք: Բայց ... ցաւեցայ գիւղէն չիջնալու ստիպուած ըլլալով վրայ: Մեր նսեմ ճակատները անշուշտ օր մը իրար կը միանան: Գրելու մի՛ մոռնար:

Ընկերուհիդ

ՄԱԳՐՈՒՂԻ

ՍԱԼՕՆԻ ՀԱՒԿԻԹՆԵՐԸ

Առանց Ե. Թօլայեան մը, Տիկ. Արաքսի Քիւչիւքեան մը ըլլալու, համարձակութիւն չէ՞ Սալօն անունը բերան առնելա . . . : Եւ որ մութ խաւերու պատշգամներուն տակ սքոյտալու բազմամեայ փորձառութիւնը ունիմ, կարելի՞ բան է որ այդ միմոտիս սենեակներէն ներս սպրդելու թուրքն ունենամ . . . :

Սալօն եւ Թուրքիան տուտու . . . : Ի՞նչ մեծ եւ անզնգային տարբերութիւն :

Սալօնի կեանքէն զոռոյ մը Սալօնի զաւակ մը կրնայ ըլլալ : Ես գիտնալով հանդերձ այս բացարձակ ճշմարտութիւնը, այս անգամ սրտիս վրայ քար դնելով պիտի փորձեմ *entrée* մը ընել այդ կարգի ճոխ սենեակներէն ներս, ճիշդ այն ապուշ վախկոտութեամբ՝ որ կ'ունենան գաւառացի երիտասարդները *bal publique* մը մտնալուն, իրենց առաջին անգամ տեսած պատկերներէն շուարած :

Եթէ Արաքսի Քիւչիւքեաններու պէս քանտիտաթներթերթերէն քաղուածքներ ընելով ժողովուրդին աչքին փոշի կը փչեն, ես մեղաւորս ալ կուգամ աչքիս տեսածէն եւ ականջիս լսածէն թարգմանել հոս այն միմիք պատկերները, որոնք կը գծուին Սալօն անուն սենեակներու չորս պատերուն մէջ :

X

Անուրանալի ճշմարտութիւն մըն է թէ, այսօր ամէն տուն ունի իր ընդունելութեան սրահը, որուն քիչ մը աւելի ճոխ կահաւորուածին սալօն անունը կուտան ալաֆռանկայի մէջ, իսկ միջակները՝ միսաֆիրի օտա կը յորջորջեն զայն : Սալօնը տան մը էն գեղեցիկ սենեակը կըլլայ ընդհանրապէս, էն ընդարձակը, որուն մէջ տնեցիք կը բերեն կը դնեն իրենց կահ կարասիներու էն աչքի զարնելիք բառթին : Չեռագործները հոգ կը զետեղուին, վերջապէս ինչ որ նոր է եւ աչքի զարնող անիկայ սալօնին կը յատկացուի :

Հայ-չայֆի մէջ սալօնը գիշեր ցորեկ բաց

կըլլայ, այնպէս որ տնեցիք իրենց տոտոխները անգամ հոգ կը լուան, ինչպէս նաեւ թօֆուի սեղանը հոգ է որ խուռուղմիշ կըլլայ : Միջակ դասակարգը իր սալօնը կը բանայ միմիայն հիւրերու ընդունելութեան համար, այնպէս որ վիզիթը լրանալէն անմիջապէս վերջ, ստոռները կը քաշուի, պարզ աւել մը կը զարնուի ու դուռը կը կղզուի, առանց բացառութեան : Իսկ հասարակ մահկանացուները՝ որոնք զուրկ չեն միսաֆիրի *osm* մը ունենալէ, անոնք ալ եթէ չեն ուրխալիր, տարին երեք չորս անգամ կը բանան այդ միմոտիս սենեակը, աղային անունին գիշերը, աղջիկսեսի առթիւ, Զատկի Մնունդի եւ չորրորդ՝ Աստուած մի արացէ մեռելէն գլուխդ ողջ կենայի եկողներուն համար, ասոնցմէ դուրս սալօն չի բացուիր այդ կարգի տուններու մէջ :

Հոս պէտք է աւելցնենք թէ՛ ամէն ատիճանի սալօն իրեն յատուկ յաճախորդները կ'ունենայ : Օրինակ մը տալու համար միջակ դասակարգի սալօնի մը իրեն յատուկ յաճախորդներով, ի ստորեւ պիտի գծենք պատկերը, զոր ընթերցողները պիտի կըրնան գաղափար մը կազմել՝ սալօնին, հիւրերուն եւ խօսակցութեան վրայ :

X

Մեր մէջ սովորութիւն դարձած է, պոչը շտկողին առաջին գործը կըլլայ սալօնը շրտկել : Մարտիկ աղան ալ նոյնը ըրաւ, տիկիներ էլմոնիկ՝ երբ ամուսնոյն պոչին շտկուիլը — որ թարգմանի գործը՝ վաստակը կարգի դնել — տեսաւ, առաջին դործը եղաւ սալօնի մը կարգադրութիւնը, ապահովել եւ յաջողեցաւ ալ :

Մարտիկ աղա երկու ամիս շարունակ ծախսելով միայն կրցաւ գոհացում տալ տիկնոջը, որ դարձեալ պակասներ կը գտնար աչքը չորս դին պտըտցնելով, մէկ դաշնակը կը պակսէր, ան ալ առնուեցաւ եւ ամենայն ինչ կատարեալ եղեւ :

— Ամա չիտակը ըսէ Մարտիրոս աղաս,

սանկ սալօնէն ներս կը մտնաս կոր նէ խո-
շոր չի գա՞ր կոր ...

— Բէք խօշ կալու բան չէ՞ ամա նէ իսէ,
ասանկ պէտք է եղեր, ասանկ ըրինք, ինծի
մնար նէ վար խաթերնիս ի՞նչ ունէր քի ե-
լանք վերիդինիս շտկեցինք տէ ավուճներով
ոսկի խարճեցինք ...

— Էյ չէ մըսեր, էլ ալէմը Մարտիկ աղա
կան կոր Մարտիկ մըն ալ պերներնուն կել-
լայ կոր ... վայլում է քի ըւարութեամբ
սալօն մը ունենանք, նայէ հասուկ ազդիկ-
ներ ունինք, մանչ զաւակ, ասոնք բիւթիւ-
նըն ալ խըզ կուզեն կոր ...

— Ուզ կուզեն կոր նէ թող կարմիր պի-
պէս ուտեն տէ խըզմիշ ըլլան, Մարտիկին
քէսէէն ի՞նչ կուզեն կոր ...

— Էյ աման դուն ալ օսկիները կծիկ
ընէլն ի՞նչ կելլայ, սանկ ունեցողն ալ վայ-
լեցունելու է քի մը ...

— Պէ կնիկ, չի ձգեցի՞ք քի ... չոր
պուշուղի պէս վիրայ քաշեցիք ... ի՞նչ է,
մօտա է եղեր, սալօն է սապօն է ինչ խառ-
նախսի է, ատ իլէ պիտի շտկուի տէյի ...
նաֆիլէ կիւզէլիմ բօրեազլըխ օտան ալ պա-
թալ ըրիք ...

— Ինծի նայէ Մարտիկ աղա, վաղը ի-
րինկուն բիւթիւն բարով նստիքի պիտի կան,
անանկ բան մը անկաճիս եկաւ ...

— Ի՞նչ եղաւ քի, նոր սո՞ւն բռնեցինք...

— Չէ ճանրմ, շտկած սալօննիս պիտի
գան տեսնան իշտէ, ի՞նչ զարար ունի թող
գան տեսնան, իյիտին մալը մէյտանտա...

— Աղէկ ամա կնիկ, մենք ատ օտան
մեզի համար շտկեցինք չէնէ հալխուն հա-
մար ...

— Հէլպէթ քի միսաֆիրի համար շտկե-
ցինք, ի՞նչ գիտցար ...

— Վախ Մառտիկ վա՛խ ... բարով խե-
րով պոչդ շտկէիր ... կըսէ, ու այդ իրի-
կունը կանուխկեկ կը պառկին, նկատելով
որ հետեւեալ գիշերը հիւրերու պատճառաւ
չպիտի կրնան քնանալ:

×

Շաբաթ իրինկուն ճաչէն վերջ Մարտիկ
աղայի նորազարդ սալօնը լոյսերու մէջ կը
չողչողայ, մինչ օրիորդները փետուրի մը

պէս թիթեւ ուրախութիւններն ցատկուտելով
կարտայայտեն, ու անդին միւսիւ Սեդրակ
հայելիին մէջ նայելով չի կշտանար նոր գը-
նած գուլթաթը գննէլն:

Տիկին Էլմոնիկ հնդկահաւի մը պէս՝ ու-
ռած, անկիւնը գանաքէին վրայ բռնած է,
ուրախութենէն տղու մը պէս հրճուելով,
մինչ Մարտիկ աղա սգաւորի մը պէս լաւ-
կան դիմօք սենեակին առարկաները կը դի-
տէ, ամէն մէկուն համար վճարած տիկինե-
րու խորքայնը երազելով:

Ժամը ճիշդ երկուք ու կէսին մօտ դու-
ռը կը վարնուի, եւ ահա մէնէքէ բուռա-
սիի, օրօրօնաքսի հոտերը կողողեն բակը:
Այր, կին, օրիորդ, երիտասարդ, ութը
անգամ մէկ ընտանիք, որոնց կը յաջորդեն
ուրիշներ ալ. բոլորը բարով նստիքէն:

Մարտիկ աղան շուարած, «բարի իրի-
կուն» ի գլուխ շարժելն, եւ յաջորդական
ասիւններէն ապուշ կը կրթի եւ տեղ տալու
համար իր հիւրերուն քշուելով քշուելով
մինչեւ դրանք մօտը կը հասնի:

— Էյ բարով վայլէք Էլմոնիցա հանրմ,
կուստօլու ես վէստէլամ, կըսեն տմէնը մէկ
բերան:

— Մառքերնուս եկածը, քուրուկ, ի՞նչ
ընենք, տուն ըսածդ սանկ շտկուած օտա
մըն ալ ունենալու չէ՞ մի ես՝ ...

— Կեցիր նայինք ... կընիկ, աստար
բարայ խարճեցինք քի, սապօն ընենք տէյի
նէ կէնէ՞ չեղաւ ...

— Հա՛ ճանրմ սալօն, սալօն, իշտէ ե-
ղեր է, ծառքդ տալար Մառտիկ աղա, բէք
աղուոր շտկուեր ես ...

— Էյ տօղուտու կուստօլու է եղեր ա-
մո՞, գիտես քի սա թառափը պօշ է մնա-
ցեր հէ՞ Սուրբիկ, կըսէ հիւրերէն մէկը ...

— Անչէ ամա, սա բիանօին վրան քառ-
ոս մը ըլլալու էր ...

— Մարտիկ աղան ասանկ բաները գիտ-
նալու է ամա, ինչո՞ւ օղթային հալիդէ մը
չէ առէր ...

— Երկու խօթուխ տահա կը վերցունէ
եղեր օտան, վա՛խ վա՛խ վա՛խ ...

— Թափինն ալ գիտես քի չէ բռներ օ-
տային էշեաներուն, խուլլանդը է ի՞նչ է...

— Էյ խաչոր մեղք խարճած բարանե-
րուդ, քա՛ ո՞ւր է սալընճախ խկէրմիսին...

— Կետնի խալին աղւոր էք առեր ամա՞, չորս հինգ հատ հիմաճուկուան մօտաներէն կտոր խալիներ ալ պէտք էր ... վա՛խ վա՛խ վա՛խ ...

Ու այս բոլոր դիտողութիւնները մտիկ ընող Մարտիկ աղան չի կրնալով համբերել, տիկինը մօտը կանչելով.

— Մեր օտան հիւանդ է էլմոն ...

— Քա ճանրմ ի՞նչ կըսես ...

— Ինչ պիտի ըսեմ, էջեայի հէքիմները իւրթիւն էկէր քօնցօլթօ կընեն կոր, չընա-
յի՞ս ... որը սաթլըճան է կըսէ կոր, որը հիւնմա է կըսէ կոր ...

— Խելքիդ եկաւ Մարտիկ աղա ...

— Որեւնուս խելքին եկաւ քի աս սու գաթըլմամը չէնէ խաֆֆիները հոս տա-
վթ ընես տէյի, հիմա քիչ մը տահա զուր-
ցեն նէ, դուռը պանամ պօյ ցոցուցէք պի-
տի ըսեմ, եէտիքլըրի նանէէ պագ, ավուճ
տօլուսի լիւս խարճէցինք քի աս փթտած-
ները կան տէ մահանա զենն տէյի ...
հա՞ ...

— Քա ճանրմ սուս, կէչ միտքի չեն ը-
սեր կո՞ր եա՞ ... չօգ չէ՛յ ...

— Քա ֆասըլ են կէչ միտքի աղեկ միտ-
քի կա՞յ ... երեսնուս ի վեր պան չը գիտ
նալիս կը զուրցեն կոր ... հաւի՞ կըլիս ...
արթնցիր ...

— Էյ տման Մարտիկ աղա, ինծի կու-
գայ քի աս իրենկուն շատ փոխցուցիր ...
ըսելով, կրկին իր հիւրերուն մօտը կերթայ:

Մինչ տարեցները այսպէս լըջօրեն կը
խօսակցին, անդին ութը տասը երկսեռ ե-
րիտասարդներ դաշնակին մօտ կը շաղակ-
րատեն, մինչ Մարտիկ աղա աչքով կը հե-
տեւի սալօնի կեանքին, բան մը՝ որ առա-
ջին անգամն է որ կը ներկայանան իրեն:

— Լա՛խ հոգիս, չեմ գիտեր, չէ՞ք հա-
ւատար ...

— Խնայեցէք օրիորդ, ձեր կաթնաթոյր
մատներուն յետին թափթփուքներն անգամ
մեզի կեանք պիտի պարգեւեն ...

— Օ՜ ... այդքան քօմրլիմա՞ն ... չեմ
կարծեր թէ ձեր սիրտն ալ բերներնուդ չափ
իրաւացի դատէ խնդիրը ...

— Հաւատացէք օրիորդ, դուք որ սալօ-
նի զարդարանքներուն փառաշուքն էք, ան-

կարելի է որ զձեզ թողունք այս գիշեր,
կ'ուզէք տեղի չիտալ ձեր քաղաքներուն ...

Ու բոլորը մէկ կսկսին երիտասարդի տաք
կատակարանութիւններու, որոնց ի տես եւ
ի լուր Մարտիկ աղա չի կրնալով զսպել ինք-
զինքը, ուղղակի կնոջը մօտենալով ...

— Կընի՛կ, խերը տեսնաս սալօնիդ ...
խըյախ քէօփուրմիւշ կըլլայ կոր ...

— Ի՞նչ է ան, կէնէ ի՞նչ եղաւ ... աս
պիր տուգ քեզի հե՞տ օգրաշմիշ պիտի ըլլամ ...

— Աչքիդ պոչը աս թառաֆ խըզըմով
ըրէ տէ տեսիր մերինները, կառնեն կը քա-
լեն կոր ալթըրիս ...

— Տէր ողորմեայ ըսէ Մարտիկ աղա,
սալօն ըսածդ իշտէ աս է, տեղ տեղ կը
նստին կը խորաթուին կը խնդան, վախիդ
կ'անցունեն ...

— Հասկցայ ամա, ադ ճահիլները, մի-
սին չեղնիին իլէն, քէօմիւրին բռնալին վրայ
չեն խորաթուիր կոր ... կրակսըզ գործ
կ'լճեն կոր ...

— Տահա նէլէր, դուն աս թառաֆ նայէ,
սալօն բացողը, պէտք է քի քիչ մը աղա-
ֆըռանկալաշմիշ ըլլայ ...

— Քա աղե՛կ եա՛յ, աս խալթը առաջ-
ուընէ չուտէ՛ր, ես աճապա սալօն է, սա-
լոն է, ծարը կը ցուցնէի, կիւզէիմ լօտօս-
լուիս օտաս աւրեցիք քի, ինծի հաւատքէ
օրէնքէ՞ հանէք տէյի ... հա՞ ...

— Քա սուս ճանրմ, ամօթ է կը լսեն ...

— Ինծի նայէ կընիկ քեզի ըսեմ, ես աս
ապուրը չեմ կրնար ուտեր, սալօն է, սա-
լօն է, ի՞նչ է նէ իմ գործիս չի գար, մօսթ-
ռան տեսանք իշտէ, իմ թապիյէթիս չի գար ...

— Չի գար ամա, աղջիկ զաւակներ ու-
նեցողները, մութլախ սալօն մը ունենալու են:

— Ես խալի եմ խլավուզներուն փարայ
կը կերցունեմ, աս սիւրթիւկներուն ճուռ-
ճիւսն ընել չեմ ի տար աղջիկներս ...

— Քա ճանրմ ամօթ է Մարտիկ աղա
քիչ մը սալօնի մարդ եղիր ...

— Իշտէ երկու սահաթի խոտար սալօնի
մարդ եղանք, հիմաազօրի մարդ եմ, թը-
թու թթու, գործերնուդ կուգայ նէ ... ,
տահա աղէկ է աղջիկներս շալը զլուխին
բէրտէին ետին միան, նէթէքիմ աս ըռէզիլ
օտային մէջը անոր ասոր մասխառան ... :

Հայ-լայֆ կեանքը շատ անգամ չի յար-
մարիր վերջն տեսածներու բռնի ճիգերուն:
Սալօնը հասկնալու եւ անոր կեանքը տանե-
լու համար, սալօնին մէջ ծնած ըլլալու է:

Դրամը մարդը մարդ չի կրնար ընել,
երբե՛ք:

ՎԱՀԱՆ ՓԱՓԱՋԵԱՆ

ՇԱԲԹՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

Գրնալը կղզիէն մեզ կը գրեն թէ՝ ձմեռուան պատճառաւ բոլոր տուները պանդոկները մարդաթափ (նոր բառ է) ըլլալնուն հետեւանօք տեղացիք վերսկսան իրենց ճգնաւորի կեանքը :

— Բերաջի մի քանի գրող կարգացող օրիորդներ ջերմապէս յօգուածագիր ուսուցչուհի մը փնտռելու վերայ են, որպէս զի կարող ըլլան իրենց մտքի արտադրութիւնները հրամցնել աղջկան գրուածքներ կարգալու հավէտի հորպալա ընթերցողներու : (Խըմբագրութիւնս տրամագիր է այդ ուսուցչութեան համար. Ծ. Խ.) :

— Ոսկերչաց շուկայէն մեր մասնաւոր թղթակիցը մեզ կը գրէ թէ տեղացի երիտասարդ մը մօտերս յաջողեր է Մասիօնէն ալ աւելի օգտակար գիւտ մը ընել, որով կարողացեր է ոսկի օղեր պղնձի փոխել : (Նորէն բան մըն է ըրածը, հապա բողբոլին անհետացնել . . . Ծ. Խ.) :

— Բերայի քոթուառներուն վրայ կարգ մը ուհիներու կրած մաֆֆեռլաններուն ի տես շողիկ վազցնող Սկիւտարցիներէն ոմանք, առանց վայրումը նկատի առնելու թէ և իրենք ալ կըռնակնին անցուցին այդ խառթալ խուչի բալթօները, սակայն . . . ըսելիքս թող հայելին շարունակէ :

— Կանանց արտառոց գլխարկներուն վերջապէս արդար պատիժը տըրուեցաւ : Կանայք այսուհետեւ չպիտի կրնան առապա քեֆեռլայի գլխարկներով թատրոնները բազմիլ, այլ սպասուհիներու պէս գլխարաց պիտի նստին : Այսպէս տնօրինուած է Իտալիոյ կա-

նանց համար : (Այս լուրէն գող ելլող մեր կիները թող շարարով լէման ուսան անմիջապէս. Ծ. Խ.) :

Սարըեարի օգէն և շուրէն կաղգուրուող օգափոխները գիշերային յաջորդական քնատութենէն ի Բերա, սկսած են իրենց առջի վիճակը իյնալ : (Քսակները արդեօք ի՞նչ կացութեան մէջ են : Ահա խնդիրը. Ծ. Խ.) :

— Տակաւ կարճացող օրերուն պատճառաւ, այժմու նշանածները փոխանակ կիրակի ցերեկները այցելութիւն տալու, կիմանանք թէ գիշեր կենալը որոշած են : (Երջանիկ այցելութիւն, եթէ կազին հրապարակը ի՞նչայ, եթէ ոչ աներ պապաները գործ ունին. Ծ. Խ.) :

— Խմբագրութիւնս նոր մէկ տնօրէնութեան համաձայն, որոշուեցաւ Տէր սղորմեայ ըսել տալ այն բաժանորդներուն համար, որոնք Հանրագիտակի բաժնեգիրները ուտելուն պատճառաւ ստամոքսի խանգարումէ կը տառապին :

— Սկիւտարէն կ'իմանանք թէ, հասուկ օրիորդ մը ձմրան յատուկ ճիճիները մինչև այս օրերս չի կրնալ զնելուն համար տանը քալան իջին քաշուէր է :

— Կարեւոր արուարձանի բնիկներէն երիտասարդ մը կիմանանք թէ Փրանսերէն լեզուն ղըով արտասանելու համար կոկորդը ծանր օքեռասիօնի մը ենթարկեր է : (Երգում մի ընէք կը հաւատանք. Ծ. Խ.) :

Արտօնսկր ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ԱՍԱՏՈՒԹԵԱՆ

Պասլը ալի ճատտեսի, քիւ 52



BOVININE

ՊՕՎԻՆԻՆ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԸՆՏԻՐ ՍՆՈՒՆԴ

ՓՈՔՐ ՏՂԱՅՈՑ

ՊԱՏԱՆԻՆԵՐՈՒ

ԵՒ ԾԵՐԵՐՈՒ

Bovinine կը պարունակէ զուտ "ննդային մասերն եզան մսին, ուղեղին, որնուղիղին և ֆոսֆորներն ոսկրային կազմուածքին, խտացեալ վիճակի մէջ:

Պոլիս նոր բերուած այս անզուգական կազդուորիչ դեղը, 27 տարիներէ ի վեր ծանօթ և գնահատուած ընդհանուր Ամերիկայի, Անգղիոյ, Ճաբոնի և Չինու համաբաւոր բժիշկներէն. ջերմապէս կը յանձնարարուի ամէն անոնց՝ որոնք կ'զգան "ուժասպառութիւն, դալկութիւն, անախորժութիւն, ստամոքսի խանգարում, ընդհանուր ջղային տկարութիւն, նիհարութիւն, կուրծքի տկարութիւն, անախորժութիւն":

Անգամ մը գործածութիւնը կը հաստատէ իր անզուգական յատկութիւնը:

Ընկերութեան միակ ներկայացուցիչը ԱՐԴԱՐԵԱՆ ԵՂՅԱՐՔ, Պահճէ-գարու, Ծամանեան նամակատան ետեւի կողմը: Կը գտնուի նաև ամէն նշանաւոր դեղարաններու և դեղորէից մթերանոցներու քով:

50—14

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ԷԱՆՆՆԵՐԶԵԼԵՆԱՅ

Արանց, Կանանց եւ Տղայոց

ՊԻՏՐԱՍՏ ԵՒ ՉԱՓՈՒ ՎՐԱՅ

Գ. ԷՐՄԷՆԵԱՆ եւ Ընկ.

Գ. Պոլիս, Սուրբան Համալս, Թօփալեան խան

Սոյն վաճառատունը, որ տարիներէ ի վեր իր ուղղութեամբ, ապրանաց տոկունութեամբ և գիններու անմրցելի աժանութեամբը շահած է բոլոր իրեն գիմող յաճախորդաց վստահութիւնը, այս անգամ ձմեռուան յատուկ ընտիր հազուատներու, կանանց բեղուններու և տղայոց չիք և դիմացկուն ֆօսֆօրներու ճոխ մթերք մը պատրաստ ունի, որ ջերմապէս կը յանձնարարուի ամէն անոնց, որոնք պէտք ունին ներկայ եզանակին հազուատի և ուրիշ նմանօրինակ պիտոյից:

Սակարկութիւն չկայ, թիւը 2 զրշ է:

Գաւառներէն յանձնարարութիւնք փութով կը կատարուին:

50—9

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

ԵԱՎՐՈՒԵԱՆ ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ


ԸՆՏԻՐ ԱԺԱՆ

ԹԷՅԻ ԽԱՌՆՈՒՐԴՆԵՐ

Ե Ի

ՄԻՇՏ ԱԺԱՆ ՈՒ ԹԱՐՄ ԵՆ

ՀՈՏԱԻՏ ԹԷՅԵՐ



Հ Է Ր Ճ Ա Յ Ի

ԱՊԱՌԻԿԻ ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Հէրճայի մեծ վաճառատունը՝ գոհարեղէններու ոսկի և արծաթ շղթայներու, գրպանի պատի և քօնսօլի ժամացոյցներու մասնաւոր վաճառումէն զատ՝ իր բազմաթիւ յաճախորդներու վստահութենէն քաջալերուած, այս անգամ կը փութայ յայտարարել թէ՝ ամէն եղանակի յատուկ վերջին նորաձեւութեան վրայ պատրաստ ունի արանց, կանանց և տղայոց համար ամէն տեսակ հազուստներ ու անձրեւի համար մուշամպա վերարկուներ, նաև ճերմակեղէններ, ֆանթէզիներ և թօափիէներ, ամերիկեան կօշիկներ։ Ունի նաև կահկարասի, ձեղունի լամբարներ, մահճակալներ, եւրոպական ու անգղիական գորգեր, գետնի մուշամպաներ, կրամփօններ ու պիսիկէթներ՝ ամենավերջին կատարելութիւններով։

Հէրճայի վաճառատունը մայրաքաղաքիս մէջ միակն է, որ շահած է հանրութեան վստահութիւնը և գոհունակութիւնը իր ապրանքներու տոկոսութեան և ոսկիներու մաքրութեան՝ ձեւաւորութեան և աժանութեան համար։

Ա Պ Ա Ռ Ի Կ

Միայն թէ գնուած ապրանքին հարիւրին 20ը կանխիկ, իսկմնացեալ գումարին համար շաբաթական հարիւրին 5 վճարմամբ պատրաստ է հայթայթել։

Վաճառատունս հաստատուած է

ՄԵԾ ՇՈՒԿԱՅ ՈՍԿԵՐՁԱՅ ՄԵԾ ՓՈՂՈՅ ԹԻԻ 13

Անգամ մը այցելել բաւական է համոզուելու համար թէ՝ Հէրճայի անմրցելի կազմակերպութեամբ մը ի վիճակի է այսօր գոհացնել իր ամենէն դժուարահաճ յաճախորդները։

Կանխիկ գնողներու համար հարիւրին 5 զեղչ

ՍԱԿԱՐԿՈՒԹԻԻՆ ՉԿԱՅ

50-5

Շաբաթական վճարմանց համար հաւաքիչներ միշտ պատրաստ են։